ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 175-Ա 11 մարտի 2026 թ.

ՄԵԼՍԻԴԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1.5-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Մելսիդա Սիմոնյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Մելսիդա Սիմոնյանին 2026 թվականի մարտի 13-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2026 թվականի հունիսի 3-ը ներառյալ:

2. Մելսիդա Սիմոնյանին՝ աշխատանքը սկսել 2026 թվականի մարտի 13-ից:

11.03.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ 08428824

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ